ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 02 >> 09 2011թ. N: 284-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ՄԱՅԻՍՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ >> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 118 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերի, 67-րդ հոդվածի 1-ին կետի <<ա>> և <<է>> ենթակետերի, << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 28-ի <<Գույք հանձնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1893-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին >> թիվ 1046-Ա որոշման 5-րդ կետի դրույթի

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Մայիսյանի բժշկական ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը ավելացնել 199800 դրամով, այն սահմանելով 8699800 դրամ,որը համապատասխանում է 2 հատ հասարակ (սովորական) բաժնետոմսի՝ մեկ բաժնետոմսի արժեքը՝ 4349900 դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2000 թվականի նոյեմբերի 6-ի <<Շիրակի մարզի թվով 47 առողջապահական ՊՓԲԸ-ների անվանափոխման և նրանց կանոնադրությունները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի պահանջներին համապատասխանեցնելու մասին>> թիվ 118 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Մայիսյանի բժշկական ամբուլատորիա >> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<4.1 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 8699800 դրամ, որը կազմում է 2 հասարակ (սովորական) բաժնետոմս: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 4349900 դրամ:
Բոլոր 2 հասարակ (սովորական) բաժնետոմսերը տեղաբաշխված են և պատկանում են հիմնադիրին՝ Հայաստանի Հանրապետությանը:>>:

3.Հաստատել սույն որոշման 1-ին կետով պայմանավորված կանոնադրության փոփոխությունը:

4.Հանձնարարել՝ <<Մայիսյանի բժշկական ամբուլատորիա >> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Յուղաբեր Ավետիսյանին. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան փաստաթղթերի փաթեթը ներկայացնել Պետական ռեգիստրի գործակալության տարածքային բաժին, պետական ընթացիկ գրանցում կատարելու համար:

5.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Հովհաննես Հովհաննիսյանին:

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետ

Ա. Գիզիրյան

Իսկականի հետ ճիշտ է